Աղուանք եւ Թիֆլիս՝[1] Առաջին Հայք։ Ջուրզան եւ Աղուանք խազարներ[2] կը տիրէին, իսկ Հայաստանի միւս մասը՝ Ցոյնք, որ կը կառավարէր Արմանիակոս[3] իշխանն։ Խազարներ սովորաբար

---

1 تفليس (Տաֆլիս) հմմտ. *Τίφιλις* (Theof. Byz. Fragmenta; Hist. Graec. Minores, Dindorff, 448). Հմմտ. Istaxri։ "Թիֆլիս Բաբ-էլ Աբուաբից փոքր է. նա ունի կաւից պարիսպներ եւ երեք դուռ։ Այստեղ բաղանիքներ կան, որոնց ջուրը առանց կրակի տաք է։"

2 Խորենացին (Աշխարհագր.) "Խազիրք" կը կոչէ ի Թիւս Սարմատիոյ ազգերի։ Թէ ե՛րբ են գաղթած խազարք Կասպից Ծովի հիւսիս-արեւմտեան ափերը, ուր նոցա կը գտնի պատմութիւնն, եւ ինչ ցեղի կը պատկանէին նոքա՝ ցարդ մութ կը մնան խնդիրներս։ Ibn Xaldun նոցա Խազրոման կը կոչէ։ Ըստ Մ. Խորենացու նոցա առաջին արշաւանքն ի Հայս տեղի ունեցաւ 193—213թ. Ց. Ք. "Ցաւուրս Վաղարշայ միաբանեալ ամբոխութիւն ի հիւսիսականացն, զխազրաց ասեմ եւ զԲասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ ելանել" (Բ. կէ)։ Օտարազգի մատենագրերին սակայն խազարք շատ առաւել ուշ ծանօթ են. Յովհաննէս Եփեսացին կը յիշէ նոցա 585թ. (Bar Hebr.) Istaxri ի միջի այլոց հետեւեալն կը հաղորդէ խազարաց մասին. "Խազարք մահմեդականներ, քրիստոնեաներ, հրէաներ եւ կռապաշտներ են. Հրէայք նւազագոյն են թւով, մահմեդականք եւ քրիստոնեայք մեծամասնութիւն կը կազմեն. սակայն թագաւորը եւ նորա դուռը Հրէաներ են, մինչդեռ ռամիկ ժողովուրդը զանազան կոքեր կը պաշտէ։" Ուսաց մատենագրեր կը վկայեն, որ դեռ Թ. դ. Սլաւոն մանր ցեղերը, որոնք Դոն եւ Դնեպր գետերի մօտերքը կ'ապրէին, խազարներին հարկ կը վճարէին։

3 أرمنياقس Հայաստանի յունական թեմի սովորական անունն է արաբացոց մօտ։ Ibn el Athir (որ իւր բազմահատոր պատմութեան համար յաճախ ամբողջ հատուածներ կը քաղէ Բելազորից), կարեւոր կը համարէ անունիս վերաբերմամբ հետեւեալ մեկնութիւնն տալ՝ "Պատրիկ Արմենակ այն երկիրն է, որ սուլթան Ղլիճ Արսլանի որդոց ձեռքումն էր, այսինքն՝ Մալաթիայ, Սիւաս, Ակսար, Իկոնիայ, եւս Ղլիճ Կոստանդինի (Բոսփորի) սահմանակից երկիրը։"